Կառավարում կրթական ծրագրի մեկնարկը տրված է. Գեղարվեստի ակադեմիան կհամակարգի եվրոպական մի շարք բուհեր - «1in.am», 15.01.2014

Հայաստանի ազգային պատկերասրահում հունվարի 15-ին Եվրամիության TEMPUS ծրագրի GOVERN նախագծի մեկնարկը տրվեց: Նախագծում ընդգրկված են Եվրոպական կրթական նշանավոր 22 հաստատություններ, որոնց մեջ է նաև Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան, որն էլ հենց, իբրև նախագծի համակարգող, եռամյա ժամկետով կգլխավորի հայտնի բուհերը:

TEMPUS ծրագրի գրասենյակի համակարգող Լանա Կառլովան լրագրողների հետ զրույցում նշեց, որ GOVERN նախագիծը հեղինակել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան, որն էլ հենց պարտավորվել է ղեկավարել ուսումնական հաստատությունները: «Հիմնականում ջանքերը պետք է ուղղեն կառավարմանը. դա մեծ պատասխանատվություն է, քանի որ նրանցից է կախված՝ ինչ համագործակցություն կստեղծվի, ինչպիսի երկխոսություն կլինի, և հուսով ենք՝ երեք տարին բավական թեժ կանցնի, և արդյունքում կունենանք բավական պատրաստված կազմ, կլուծվեն կարևոր խնդիրներ»,- ասաց նա՝ միաժամանակ տեղեկացնելով, որ ընթացիկ տարում Tepmus-ը կունենա 18 նոր ծրագիր, որոնք կիրականացնեն հայկական բուհերը՝ ոչ միայն եվրոպական, այլև ԱՊՀ և այլ նշանավոր բուհերի հետ համատեղ: Գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանի խոսքով՝ զարմանալի չէ իրենց մասնակցությունը ծրագրին, քանի որ «Տեմպուս» ծրագրում իրենց մասնակցությունը բավական ակտիվ է եղել, և բուհն այսօր էլ մասնակցում է հինգ ծրագրի, և հնարավորություն է ընձեռվել ղեկավարել դրանցից մեկը:

«Կառավարման ծրագրի համակարգողը մեր Ակադեմիան է: Սա առաջին հավաքն է Երևանում, որին ներկա են հայաստանյան և արտերկրի բուհերի ներկայացուցիչներ: Այս կոնֆերանսում կներկայացվեն տարբեր բուհերի մոտեցումները բուհի կառավարման իմաստով, և Ակադեմիան էլ իր նկատառումները կներկայացնի: Մեզ երկար աշխատանք է սպասվում՝ եվրոպական կրթական համակարգ ինտեգրվելու իմաստով»,- ասաց նա՝ նշելով, որ սրանով ակադեմիայի կարգավիճակն էլ ավելի է բարձրանում:

https://www.1in.am/244206.html